

*Handwritten notes in the top left corner, possibly a signature or reference number.*

Միամեայ (1949) գործունէութեանս համարատուութիւնն է Ուստրի Ս. Փրկիչ

Եկեղեցւոյ համայնքին մէջ

Սիրելի եւ բարեպաշտ ժողովուրդս

1950-երորդ տարւոյ սեմին առջեւ կանգնած, կողջունեմ զՁեզ ամենքդ, եւ իմ խոր  
շնորհակալութիւնս կը յայտնեմ ի խնդիր այն համակրութեան եւ յարգանաց, որոնց  
շնորհիւ կարելի եղաւ Ձեր մէջ որպէս Հոգ, Հովիւ պաշտօնավարութեանս 18-երորդ  
տարին թեւակոխել: Այս առթիւ ըստ ընկալեալ սովորութեան կը փութամ իմ միամեայ  
գործունէութեանս հակիրճ համարատուութիւնը կատարել:

Պատ, Հոգաբարձութեանս մասնաւոր կարգադրութիւնով եւ հաճութիւնով թրոյ  
նիւ Եորք մեկնեցայ ամրան, եւ հոն Ս, պսակի արարողութիւն մը կատարեցի: Ամէն  
Կիրակի առանց բացառութեան Ս, Պատարագի մատուցումով եւ աւուր պատշաճի քարոզով  
իմ վրաս ծանրացած հոգեւորականի պարտականութիւնս խղճամտութիւնով կատարած եմ:  
Հոգաբարձական հերթական բոլոր ժողովներուն միշտ նախագահած եմ եւ համեստ կա-  
րողութեանս թոյլատրած չափով շանացած եմ կարգ-կանոնը անվթար պահել, եւ Պատ,  
Հոգաբարձութեան յառաջադրած ազգօգուտ ծրագիրներու անսայթաք գործադրութեան  
սատար հանդիսանալ: Հիւանդանոցներուն եւ կամ իրենց տուններուն մէջ անկողնոյ  
ծառայող հիւանդներուն միշտ այցելած եմ, եթէ սակայն անոնք լուր չեն տուած  
թէ հիւանդ են, այդ առթիւ մեղաւոր չեմ նկատեր ինքզինքս: Ս, Մննդեան եւ Ս, Զատկի  
Տօնեքու ճրագալոյցի օրերը ժամը 9-12, ըստ ընկալեալ դրութեան, Եկեղեցւոյ մէջ  
մնալով, Ս, Հաղորդութիւն մատակարարած եմ Ազգ, երկսեռ վարժարանաց աշակերտութեան  
ինչպէս նաեւ հաւատաւոր ժողովուրդէն փախաքողներուն:

Ամբողջ տարուան մէջ կատարած եմ 34 մկրտութիւն, 9 նշանախօսութիւն, 14 պսակ,  
38 թաղում: Ամենամեծ բաղձանքս է տեսնել մեր կիրակնօրեայ վարժարանի ինչպէս  
նաեւ Ազգ, վարժարանի աշակերտութեան շարքերու խտացումը, որուն համար ծնողաց  
պարտականութիւնը շատ լուրջ է եւ անարդարանալի, քանի որ մեր նոր սերունդը  
կը փափաքինք հայ պահել: Սրտագինս կը շնորհաւորեմ Արժանայարգ Երեսփոխաններու  
Պատ, Հոգաբարձութեան, Դպրաց Դասու, Եկեղ, Տիկ, Միութեան, Ուսումն, Խորհրդոյ, Վեր-  
ստուգիչ Մարմնոյ, Երիտասարդաց միութեան, Հ, Բ, Ընդհ, Միութեան, եւ հայրենակցական  
Միութեանց եւ Եկեղեցւոյս կողքին գործող քաղաքական կազմակերպութեանց հաւաքա-  
կան գործակցութիւնը, որոնց համադրումով է որ հնարաւոր դարձաւ անցնող տարին  
եւս բոլորել յաջողութիւնով եւ առանց յետնեւ պարտքի: Մեծ փափաքս է մղում տալ  
Ս, Եկեղեցւոյս բարեյիշատակ կտակարարներու կրկնապէս (նիւթապէս եւ բարոյապէս)  
օգտաշատ գործին, որուն շնորհիւ նոր շինուելիք Եկեղեցւոյ գումարը զգալապէս  
բարձրացած է: Յարգ 110 հատ կտակարարներ ունինք, որոնց յիշատակին ամէն տարի  
սովոր ենք Գիւտ Խաչի տօնի առթիւ հանդիսաւոր Ս, Պատարագ եւ Հոգեհանգիստ կատա-  
րել, եւ այս կերպով թէ անոնց յիշատակը թարմացնել, եւ թէ անոնց սգաւոր պարագա-  
ները մխիթարել ի սիրտ եւ ի հոգի:

Անշուշտ ամենուզ համար յայտնի է թէ, կտակարարութեան փափուկ եւ պատասխանատու գործին վարիչը եղած է տարիներէ ի վեր Պ. Մարտիրոս Տիրանեան, որ իր հնարաւոր բոլոր ջանքերը ի գործ կը դնէ արդիւնաւոր կերպով ընթացք տալու համար իր ստանձնած այդ զուտ ազգասիրական եւ Աստուածահաճոյ գործին: Ուստի խոնարհաբար յորդոր կը կարգամ իմ սիրելի ժողովուրդիս, որպէսզի անոնք որ գեռ մինչեւ այսօր այդ ուղղութեամբ քայլ առած չեն, թող փութան իրենցմէ առ յաւետ բաժնուող իրենց սիրելիներուն յիշատակը վառ պահելու համար դիմել Պ. Մարտիրոս Տիրանեանի, վստահ ըլլալով որ հնարաւոր ամէն դիւրութիւն պիտի տայ իրենց:

Ենորհակալութիւն կը յայտնեմ Ս. Եկեղեցւոյս սփոփարար հովանւոյն տակ հոգեպէս մխիթարուելու շեղմ փափաքով ամէն Կիրակի Եկեղեցի յաճախողներուն, իսկ հազուադէպ կերպով, այսինքն տարին քանի մը անգամ միայն Եկեղեցի յաճախել սովորութիւն դարձնող ժողովուրդիս ալ յորդոր կը կարգամ, որպէսզի նկատի ունենալով Տիրաւանդ պատգամը թէ — Հոգի առաւել է քան զկերակուր, եւ մարմին քան զհանդերձ—ը, շնան իրենց Եկեղեցի յաճախելու բարի եւ Աստուածահաճոյ սովորութիւնը բազմապատկել, քանի որ Եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեպարար արարողութիւնները ամբողջ Ուստրցիներուն համար են, եւ ոչ թէ մասնաւորներու:

Եթէ ծնողք մը Եկեղեցի գալու նկատմամբ իր անձին օրինակով իր զաւակը Եկեղեցի յաճախել չի վարժեցնէ, զուր են այդ ուղղութեամբ իր տալիք ծնողական խրատներն ու թելադրութիւնները: Ուստի շեղմապէս կը յանձնարարեմ իմ սիրելի ժողովուրդիս որ գէթ յետ այսու քայլ մը աւելի յառաջ քալէ այս ուղղութեամբ:

Ձեկոյցս փակելէ առաջ, պիտի խնդրէի ունկնդիր ժողովուրդէս, որպէսզի բարի ըլլան իրենց լաւ գրել եւ կարգալ, երգել վարժ երկսեռ զաւակները Դպրաց Դասին միանալու համար ջանք թափեն, քանի որ մեր նորընտիր երաժշտապետը Տօքթ. Արա Աւագեան տարիէ մը ի վեր շնորհաւորելի եռանդով մը փարած է Եկեղեցւոյ երգեցիկութիւնը բարելաւելու իր յոյժ գնահատելի յառաջադրութեան, եւ ես վստահ եմ որ, եթէ մեր բոլոր Դպիր-Դպրուհիները, Սարկաւազները ինծի հետ միակամ եւ բարեացակամ վերաբերումով շնան արդիւնաւորել անոր ցոյց տուած զուտ ազգասիրական ջանքերը, ես վստահ եմ թէ շատ չանցած անոր ներկայութիւնը պիտի ունենայ իր որոշ օգտակարութիւնը, ի մխիթարութիւն եւ ի պատիւ այս մեր ժողովուրդին:

Մաղթելով որ այս նոր տարուան մէջ բարձրեալը Ձեր ամենուն շնորհէ գործի յաջողութիւն, առողջութիւն, երջանկութիւն, սէր եւ միութիւն, կօրհնեմ զՁեզ ամենքդ ի սրտէ եւ յաջող տարի մը եւս բոլորելու բարի կամեցողութիւն եւ յարատեւութեան եռանդ կը հայցեմ ի սրտէ: Տէրը օրհնէ զՁեզ ամենեսին, ամէն:

ՅԱԿՈՔ ԲԶՅ, ՄԻՃԵԱՆ, Հոգեւոր Հովիւ Ս. Փրկիչ Եկեղ. Ուստրի